**Արձանագրություն N 2**

**ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով վարչական սարքավորումների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 05.03.2020թ.

ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Տ. Ղուկասյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Լ. Սարիբեկյան |
| | Լ. Խալաթովա |
| | Հ. Բաղինյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Հարությունյան |
| Բացակայում էր՝ | |
| Հանձնաժողովի անդամ՝ | Ծ. Իսախանյան |

**1. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին**

---------------------------------------------------------------------------------------------------------

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

բ) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են 2020 թվականի մարտի 2-ին, ժամը 11:30-ին:

գ) Գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտեր չեն ներկայացվել, իսկ մյուս չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել <<Վեգա Ուորլդ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից):

ՀՀ դրամ

| Չափաբաժնի համարը | Մասնակցի անվանումը | Ապրանքի անվանումը | Նախահաշ վային արժեք | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գին |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | - | Դյուրակիր համակարգիչներ | 840 000 | Գնային առաջարկ չի ներկայացվել | | | |
| 2 | | Համակարգչային պլանշետ | 280 000 | | | | |
| 3 | <<Վեգա Ուորլդ>> ՍՊԸ | Կենցաղային սառնարաններ | 200 000 | 180 000 | 11 500 | 38 300 | 229 800 |
| 4 | | Օդորակիչ-1 | 700 000 | 496 000 | 20 500 | 103 300 | 619 800 |
| 5 | | Օդորակիչ-2 | 460 000 | 400000 | 16 500 | 83 300 | 499 800 |

դ) Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 3-րդ չափաբաժնի մասով տեխնիկական բնութագրում նշված <<կլիմատիկ դասը-SN>> չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին՝

<<կլիմատիկ դասը-T>>, ինչպես նաև վերջինիս կողմից չի ներկայացվել հրավերով սահմանված սպասարկման կենտրոնի հասցեն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է 02.03.2020թ. նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որոնք սահմանված ժամկետում շտկվել են:

ե) Հաշվի առնելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և ծանուցել հրավերի պահանջներին բավարարող գնահատված Մասնակցին առաջարկված գների նվազեցման նպատակով 05.03.2020թ. ժամը 11:00-ին ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ հասցեում կազմակերպվող բանակցությունների մասին:

Մասնակցի կողմից 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ներկայացվել են նոր գնային առաջարկներ:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի համարը | Մասնակցի անվանումը | | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 3 | <<Վեգա Ուորլդ>> ՍՊԸ | Կենցաղային սառնարաններ | 166666.67 | - | 33333.33 | 200 000 |
| 5 | | Օդորակիչ-2 | 383333.33 | - | 76666.67 | 460 000 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

## 2. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին

---

(Տ. Ղուկասյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը հայտը գնահատել է բավարար:

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել <<Վեգա Ուորլդ>> ՍՊԸ-ին:

2.3 <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

## 3. Պետական գնման պայմանագրեր կնքելու որոշում ընդունելու մասին

---

(Տ. Ղուկասյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ <<Վեգա Ուորլդ>> ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:*

**4. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

(Տ. Ղուկասյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ________________ Տ. Ղուկասյան

Անդամ՝ ________________ Լ. Սարիբեկյան

________________ Լ. Խալաթովա

________________ Հ. Բաղինայն

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ________________ Ն. Հարությունյան